ՆԱԽԱԳԻԾ

ՕՐԵՆՔԸ

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Քաղաքացիական կացության ակտերի մասին» օրենքը (այսուհետ՝ Օրենք) լրացնել հետևյալ բովանդակությամբ 83[1] հոդվածով՝.

«Հոդված 83[1] Փաստաբանական հարցումները

1. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինը պարտավոր է սույն հոդվածով նախատեսված կարգով և ժամկետում պատասխանել փաստաբանի կողմից ներկայացված հարցմանը (փաստաբանական հարցմանը), եթե հարցման մեջ փաստաբանը նշել է այն վստահորդի անունը, ազգանունը (անվանումը), որին իրավաբանական օգնություն ցույց տալու անհրաժեշտությունից ելնելով է հարցումը կատարել: Հարցմանը կցվում է նաև փաստաբանի արտոնագրի պատճենը: Այլ փաստաթղթեր և տեղեկություններ փաստաբանից չեն կարող պահանջվել:

2. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինը պարտավոր է սույն հոդվածի 1-ին մասում նշված փաստաբանական հարցումը ստանալու պահից տասնօրյա ժամկետում հարցում կատարող փաստաբանին տրամադրել պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները) կամ դրանց պատճենները, բացառությամբ որդեգրման հետ կապված տեղեկություններից:

3. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի կողմից փաստաբանական հարցմանը մերժելու հիմք չի կարող լինել փաստաբանի կամ նրա վստահորդի տեղեկատվության հայցման շահագրգիռ անձ չլինելը:

4. Փաստաբանն իրավունք ունի սույն հոդվածով նախատեսված տեղեկություններն օգտագործել միայն հարցման մեջ նշված վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալու նպատակով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

ՕՐԵՆՔԸ

«ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի հաշվառման մասին» օրենքը (այսուհետ՝ Օրենք) լրացնել հետևյալ բովանդակությամբ 67-րդ հոդվածով.

«Հոդված 67[1] Փաստաբանական հարցումները.

1. Գործակալությունը պարտավոր է պատասխանել փաստաբանի կողմից ներկայացված հարցմանը:

2. Գործակալությունը պարտավոր է փաստաբանական հարցումը մուտքագրվելու պահից տասնօրյա ժամկետում հարցումը կատարող փաստաբանին տրամադրել պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները) կամ դրանց պատճենները, եթե դրանք վերաբերում են քաղաքացիական կացության ակտերի գրացման մարմնի իրավասությանը և չեն պարունակում օրենքով պահպանվող գաղտնիք:

3. Գործակալության կողմից փաստաբանական հարցմանը մերժելու հիմք չի կարող լինել փաստաբանի՝ տեղեկատվության հայցման շահագրգիռ անձ չլինելը:»:

Հոդված 2. Օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի երկրորդ նախադասությունը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

ՕՐԵՆՔԸ

«ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ» ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 18[1] հոդվածով.

«Հոդված 18[1] Փաստաբանական հարցումներին պատասխանելը

1. Ազգային անվտանգության մարմինը պարտավոր է սույն հոդվածով նախատեսված կարգով և ժամկետում պատասխանել փաստաբանի կողմից ներկայացված հարցմանը (փաստաբանական հարցմանը), եթե հարցման մեջ փաստաբանը նշել է այն վստահորդի անունը, ազգանունը (անվանումը), որին իրավաբանական օգնություն ցույց տալու անհրաժեշտությունից ելնելով է հարցումը կատարել: Հարցմանը կցվում է նաև փաստաբանի արտոնագրի պատճենը: Այլ փաստաթղթեր և տեղեկություններ փաստաբանից չեն կարող պահանջվել:

2. Ազգային անվտանգության մարմինը պարտավոր է սույն հոդվածի 1-ին մասում նշված փաստաբանական հարցումը ստանալու պահից տասնօրյա ժամկետում հարցում կատարող փաստաբանին տրամադրել Հայաստանի Հանրապետության սահմանով քաղաքացու մուտքի և ելքի մասին տեղեկությունը, ինչպես նաև պահանջվող այլ տեղեկություններ (փաստաթղթեր), եթե դրանք վերաբերում են ազգային անվտանգության մարմնի իրավասությանը և չեն պարունակում օրենքով պահպանվող գաղտնիք:

3. Ազգային անվտանգության մարմնի կողմից փաստաբանական հարցմանը մերժելու հիմք չի կարող լինել փաստաբանի կամ նրա վստահորդի տեղեկատվության հայցման շահագրգիռ անձ չլինելը:

4. Փաստաբանն իրավունք ունի սույն հոդվածով նախատեսված տեղեկություններն օգտագործել միայն հարցման մեջ նշված վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալու նպատակով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 189[7] հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«*3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված անձանց կողմից փաստաբանի կողմից պահանջված տեղեկություններն ապօրինաբար չտրամադրելը՝*

- առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից մինչև յոթանասնապատիկի չափով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԱՍԻՆ», «ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ», «ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույն օրենքների նախագծերի փաթեթի ընդունումը պայմանավորված է դատաիրավական բարեփոխումների համատեքստում փաստաբանության՝ որպես արդարադատության իրականացմանը նպաստող ինստիտուտի դերակատարման բարձրացման հրամայականով և այդ առումով փաստաբանության սահմանադրական կարգավիճակից բխող համապատասխան միջոցառումների իրականացման անհրաժեշտությամբ և նպատակաուղղված է անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի և այդ նպատակով գործող փաստաբանության ինստիտուտի պատշաճ գործառման օրենսդրական երաշիքների ստեղծմանը: Այդպիսով նաև հուսալի երաշխիքներ են ստեղծվում դատարանում զենքերի հավասարության սկզբունքի արդյունավետ իրականացման և, ըստ այդմ, գործի բազմակողմանի քննության ու պատճառաբանված դատական ակտի կայացման համար:

Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը: Փաստաբանների կարգավիճակը, իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով:

Սահմանադիրը վերոնշյալ իրավադրույթի միջոցով փաստաբանությանը վերապահում է սահմանադրաիրավական կարգավիճակ՝ փաստաբանության ինստիտուտը դիտարկելով որպես անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի ապահովման՝ պետության պոզիտիվ պարտականության հիմնական կառուցակարգ:

Ավելին՝ ՀՀ Սահմանադրական դատարանն իր 05.04.2016թ. թիվ 1263 որոշմամբ հստակորեն արձանագրել է, որ. «2015թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածը, որը վերաբերում է դիտարկվող իրավունքին, պարունակում է 2-րդ մաս...: Դրանով իսկ պետությունն ընդլայնել է որակյալ իրավաբանական օգնություն ցուցաբերելու իր պոզիտիվ պարտականության շրջանակները՝ սահմանադրական մակարդակի բարձրացնելով փաստաբանության՝ որպես որակյալ իրավաբանական օգնություն տրամադրող ինստիտուտի դերը:»: Այսինքն՝ Սահմանադրական դատարանն իր նշված

իրավամեկնաբանությամբ ընդլայնել է փաստաբանության ինստիտուտի իրավական նշանակությունը որպես ոչ միայն իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրացման ապահովմանն ուղղված հատուկ սահմանադրական ինստիտուտ, այլև փաստաբանության առջև փաստացի դրել է պարտականություն՝ այդ իրավաբանական օգնությունն իրականացնել որակյալ կերպով:

Նշվածի համատեքստում շատ կարևոր է փաստաբանական հարցման ինստիտուտի արդյունավետության բարձրացման օրենսդրական հիմքերի ձևավորումը: Փաստաբանական հարցումը, այն է՝ փաստաբանի կողմից իր վստահորդի գործով պետական, տեղական ինքնակառավարման մարմիններից և մասնավոր կազմակերպություններից տեղեկատվություն պահանջելու իրավունքը փաստաբանի սահմանադրական կարգավիճակի գործնական իրացման անօտարելի տարրերից է, առանց որի արդյունավետ գործառման՝ փաստաբանական գործունեության և, համապատասխանաբար, անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրացման արդյունավետությունը նկատելիորեն ընկնում է: Մասնավորապես,

«Փաստաբանության մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ *փաստաբանն իրավունք ունի դիմելու պետական, տեղական ինքնակառավարման մարմիններին, անհատ ձեռնարկատերերին և իրավաբանական անձանց (այսուհետ՝ տնտեսավարող սուբյեկտներ)՝ իրավաբանական օգնություն ցույց տալու համար անհրաժեշտ փաստաթղթեր (տեղեկություններ) ստանալու պահանջով: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են տասնօրյա ժամկետում փաստաբանին տրամադրել պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները) կամ դրանց պատճենները, բացառությամբ, երբ այդ մարմինների գործունեությունը կարգավորող օրենքներով այլ բան է նախատեսված, կամ պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները) օրենքով պահպանվող գաղտնիք են պարունակում: Փաստաթղթերի (տեղեկությունների) տրամադրման մերժումը պետք է տրվի գրավոր և պատճառաբանված: Սույն կետում նշված դեպքում փաստաբանից կարող է գանձվել փաստաթղթերի (տեղեկությունների) կամ դրանց պատճենների տրամադրման համար վճար, որը չի կարող գերազանցել դրա պատրաստման ծախսերը, եթե օրենսդրությամբ վճարման այլ չափ նախատեսված չէ:*

Փաստաբանի վերոնշյալ լիազորությունը, սակայն, չունի իրացման ապահովման հուսալի իրավական երաշխիք. չի գործում փաստաբանական հարցման հասցեատերերի կողմից փաստաբանական հարցման չպատասխանելու կամ օրենքով սահմանված վերոնշյալ ժամկետի խախտմամբ պատասխանելու դեպքում նրանց պատասխանատվության կանչելու բավարար չափով որոշակի իրավական մեխանիզմ՝ պետական մարմինների հստակ պարտականության և վերջինիս չկատարելու դեպքում իրավական պատասխանատվության միջոցի տեսքով: Արդյունքում պրակտիկայում փաստաբանների հարցումները պետական ինստիտուտների կողմից հաճախ թողնվում են անպատասխան, կամ պատասխանները լինում են թերի և չպատճառաբանված: Հատկապես օրախնդիր է ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների և պետական ռեգիստրի գործակալության,

ինչպես նաև ազգային անվտանգության մարմինների կողմից փաստաբանական հարցումներին ոչ պատշաճ վերաբերմունքի հարցը, քանի որ փաստաբաններից ստացվող բողոքները հիմնականում վերաբերում են նշյալ մարմինների կողմից փաստաբանների հետ հարաբերություններում ոչ պատշաճ կոմունիկացիային:

Հետևաբար առաջարկվում է «Քաղաքացիական կացության ակտերի մասին», «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների հիմնարկների եվ անհատ ձեռնարկատերերի հաշվառման մասին» և «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքներում կատարել լրացումներ՝ սահմանելով նշյալ մարմինների կողմից փաստաբանական հարցումներին պատասխանելու պարտականությունը, նախատեսելով փաստաբանական հարցումներին պատասխանելու հստակ ժամկետները և մերժման հիմքերը:

Բացի այդ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում առաջարկվում է սահմանել որակյալ զանցակազմ, որը վարչական պատասխանատվություն կնախատեսի պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների և նրանց մասնակցությամբ հիմնարկների և կազմակերպությունների կողմից փաստաբանական հարցմանն ապօրինաբար չպատասխանելու համար:

Գործող իրավակարգավորմամբ, որը նախատեսված է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով, տեղեկատվության չտրամադրումը որպես վարչական զանցանք չի տարբերակվում ըստ զանցառուի սուբյեկտի և տարածվում է օրենսդրությամբ հանրային մարմիններից տեղեկատվություն հայցող բոլոր անձանց կողմից տեղեկությունների ստացման դիմումներն ապօրինի մերժելու դեպքերի վրա, մինչդեռ, նման մոտեցումը չի համապատասխանում փաստաբանական հարցման հանրային նշանակությանը և փաստաբանության ինստիտուտի հանրային-իրավական կարգավիճակի իրացման առանձնահատկություններին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ սույն նախագծով առաջարկվում է փաստաբանական հարցմանն ապօրինաբար չպատասխանելը սահմանել որպես որակյալ զանցակազմ՝ սահմանելով տուգանքի ավելի բարձր սահմանաչափ: Ակնկալվում է, որ առաջարկվող փոփոխությամբ կբարձրանա փաստաբանական հարցման ինստիտոիտի արդյունավետությունը՝ հարցման հասցեատերերի իրավական կարգապահության բարձրացման և իրավակական պատասխանատվության կառուցակարգի հստակեցման միջոցով:

«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի հաշվառման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածում առաջարկվող փոփոխությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ սահմանված կարգավորումը անհարկի խոչընդոտներ է ստեղծում գործակալության պաշտոնական կայքէջից ստացված էլեկտրոնային փաստաթղթի արտատպման հետագա՝ ըստ նպատակային նշանակության օգտագործման համար:

Մասնավորապես, **Օրենքի** 9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *Դիմողի պահանջով Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափով վճար վճարելու պայմանով, իսկ սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված*

դեպքերում առանց վճարման անձին տրվում է էլեկտրոնային փաստաթղթի արտատպումը (պատճենը): ***Այս դեպքում պատճենի իսկությունը հավաստվում է պատճենի վրա դրված՝ գործակալության համապատասխան աշխատակցի ստորագրությամբ:***

Նշվածից հետևում է, որ անձը վճարելով համապատասխան վճարը հնարավորություն է ստանում առցանց ստանալ համապատասխան փաստաթուղթը, սակայն այն չի կարող օգտագործել ըստ իր նպատակային նշանակության, օրինակ ներկայացնել դատարան, քանի որ այն չի որակվի որպես վավեր փաստաթուղթ, նունիսկ այն պայմաններում, երբ էլեկտրոնային եղանակով բեռնված փաստաթղթի վրա առկա է գործակալության կնիքը: Որպես այդպիսին որակվելու համար անձը նաև պարտավոր է այն ներկայացնել գործակալություն, որպեսզի վերջինիս համապատասխան աշխատակիցը այն ստորագրի: Այսինքն իմաստազրկվում է էլեկտրոնային եղնակով տեղեկություն ստանալու իմաստը, որը ինչպես ենթադրվում է, ներդրվել էր թե պահանջվող տեղեկությունը առավել դյուրին ընթացակարգով ստանալու, և թե գործակալության աշխատանքային ծանրաբեռնվածությունը թեթևացնելու համար:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԱՍԻՆ», «ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ», «ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Քաղաքացիական կացության ակտերի մասին», «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի հաշվառման մասին», «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքներում և Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի ընդունման կապակցությամբ նոր իրավական ակտերի ընդունման, գործող իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԱՍԻՆ», «ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ», «ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՐՃԱՏՄԱՆ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Քաղաքացիական կացության ակտերի մասին», «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի հաշվառման մասին», «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքներում և Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության եկամուտների կրճատում և ծախսերի ավելացում նախատեսվում: